**Burbank Unified School District**
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

**Board of Education**
Steve Frintner, President
Charlene Tabet, Vice President
Steve Ferguson, Clerk
Dr. Emily Weisberg
Dr. Armond Aghakhanian

**Superintendent**
Matt Hill, Ed.D.

16 December 2021

ԲԴՄՇ-ի հարգելի աշակերտներ, ընտանիքներ և աշխատակիցներ,

Մոտենալով ձմեռային արձակուրդներին, կրթական գրասենյակն ու ես, ցանկանում ենք մաղթել բոլորին անվտանգ, առողջ և հանգիստ արձակուրդներ:

Անցյալ տարի, կենտրոնանալով մեր աշխատկազմի առողջության և անվտանգության վրա, մենք կարողացանք մեր աշակերտներին և աշխատակազմին անձամբ վերադարձնել դպրոց: Մեզանից շատերը զգացել են, որ այս շարունակական համաճարակը ֆիզիկապես, հոգեպես և հուզական առումով ազդել է մեզ վրա: Հյուծվածությունը այն բառը չէ, որով կարելի է նկարագրել մեր շատերի վիճակը: Մենք պետք է շարունակենք կենտրոնանալ մեզ և միմյանց աջակցելու վրա:

Դժբախտաբար, Կորոնավիրուսը դեռ տարածվում է մեր համայնքում, ուստի մենք պետք է շարունակենք պատվաստվել, դիմակ կրել և վերահսկել ախտանիշները: Խնդրում եմ, արձակուրդների ընթացքում, կենտրոնանալ հանգստանալու և ապահով մնալու վրա: Հունվարին դպրոց վերադառնալիս, խնդրում ենք մնալ տանը, եթե դուք Կորոնավիրուսի քննության դրական պատասխան ստանաք կամ ունենաք ախտանշաններ:

2022 թվականին մենք ամուր հիմք կկառուցենք և կկենտրոնանանք շարունակական բարելավում կատարել, որպեսզի ապահովենք աշակերտների ուսուցումը ողջ կյանքի ընթացքում:

- Բարձրացնել և տոնել դասավանդման և ուսուցման մեր լավագույն փորձը: Մենք վերափոխել ենք կրթական խորհրդի նիստերը, որպեսզի յուրաքանչյուր նիստ կենտրոնանա դասավանդման և ուսուցման վրա:
- Շարունակել ընդլայնել և խորացնել «Բազմազանության, հավասարության և ներառման» (DEI) ծրագրի մեր աշխատանքները: Սա ներառում է աշակերտների, ծնողների և աշխատակազմի հարցումների մեկնարկը հունվարին, որպեզի մենք կարողանանք լսել և հասկանալ բոլորի ստացած փորձը:
- Ընդլայնել հոգեկան առողջության առկա ռեսուրսների մասին իրազեկությունը Բրբենքի ընտանեկան ծառայությունների գործակալության հետ ունեցած մեր համագործակցության *«Գնալ այնտեղ»* (*Go There* ) քարոզարշավի միջոցով:

Շարունակելով աշխատել միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,



դոկտոր Մաթ Հիլլ (նա/նրա/նրան)
գերատեսուչ